97

ՀԵ 404, Էլմ. 464

1. Հասա Բևլա՝ երկիր սիրուն,
Ուր վայելեմ շատ բերկրություն:
Հոս շարունակ կա լույս պայծառ
Եվ օդ՝ գարնան զվարթարար:

Ո՜վ պերճ Բևլա, ո՜վ քաղցր երկիր,
Հովերդ՝ անուշ, դաշտերդ՝ ընտիր,
Ուրախ աչքերս երբ վերցնեմ,
Փառաց պալատն մոտ կտեսնեմ:
Ո՜վ լուսափայլ բնակարան,
Ո՜վ երկնային տուն հանգստյան:

2. Հոս պարտեզներ կան գեղեցիկ,
Ջուրերն են զով և թափանցիկ,
Եվ գունագեղ ծաղիկներեն
Անուշ հոտեր միշտ կբուրեն:

3. Մեղմ զեփյուռներ ինձ կբերեն
Ախորժ ձայներ սուրբ քաղաքեն,
Երբ փրկվածներն՝ խումբ երկնային,
Ըղձիվ կերգեն երգ Գառնուկին:

4. Հիսուս է հոս ինծի ընկեր,
Կհաղորդե սիրո խոսքեր,
Ձիս կտանի կանաչ արոտ,
Իրոք, այս տեղն երկնից է մոտ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025